ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԹԻՄ ՓԵՅ» ՓԲԸ-ին էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն տրամադրելու մասին..... 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ին լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին..... 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԳՆՈՒՆԻ ԳՐԱՎԱՏՈՒՆ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության լիցենզիա տրամադրելու մասին

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ֆասթ Բանկ» ՓԲԸ «Սևան», «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ «ԷՐԵԲՈՒՆԻ», «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Սիլաչի», «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «Վարդանանց» մասնաճյուղերը գրանցելու մասին..... 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Արցախբանկ» ՓԲԸ «Ախթամար» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին..... 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ..... 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 119Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին..... 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 123-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»..... 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 124-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»..... 8

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 129-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»..... 10

Վիճակագրական ամփոփագիր..... 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն է տրամադրվել*** «ԹԻՄ ՓԵՅ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 126Ա):

- ***Լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 131Ա):

- ***Գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ԳՆՈՒՆԻ ԳՐԱՎԱՏՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 133Ա):

- ***Գրանցվել են*** «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Սևան», «ԱՅՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ԷՐԵԲՈՒՆԻ», «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Սիլաչի», «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Վարդանանց» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/403Ա,409Ա, 1/429Ա, 1/441Ա):

- ***Թույլատրվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ախթամար» մասնաճյուղի ***գործունեության դադարեցումը*** (որոշում թիվ 1/442Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում՝*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/420Ա,1/423Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2023 թ. օգոստոսի 1-ի թիվ 119Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 11.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 8,75%:

08 օգոստոսի 2023 թվականի թիվ 123-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու ֆոնդերի գրանցման միասնական ընթացակարգը և վերացնելու կարգավորման ասիմետրիան,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը և 61-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ը հաստատելու մասին» թիվ 117-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի նախաբանում «25-րդ հոդվածի 6-րդ մասը,» բառերից հետո լրացնել «61-րդ հոդվածի 4-րդ մասը,» բառերը:
2) Կանոնակարգի 1.1 կետը ուժը կորցրած ճանաչել:
3) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով կամ կարգավորվող շուկայի օպերատորի առցանց գրանցման համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով, կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի Էֆ» ֆորմատով:»:

4) Կանոնակարգի 4.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. օգոստոսի 8-ին (ՀՀԳՏ, 15.08. 2023):

5)Կանոնակարգի 4.9-րդ կետի «մասին» բառից հետո լրացնել «ինչպես նաև նշվում է նախկինում արդեն ներկայացված տեղեկատվության ամսաթիվը» բառերը:

6)Կանոնակարգի 12-րդ կետի 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

7)Կանոնակարգի 18-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«10) փոստային և էլեկտրոնային հասցեները, որով ֆոնդը (կառավարիչը, իսկ եթե ոչ հրապարակային ֆոնդի գործադիր կառավարումը պատվիրակվել է կառավարիչ չհանդիսացող այլ անձի՝ այդ անձը) համաձայն կլինի ստանալ իրեն վերաբերող փաստաթղթերն ու ծանուցումները և իրականացնել նամակագրություն:»:

8)Կանոնակարգի 18-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-14-րդ ենթակետերով.
«12) ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի անվանումը և գտնվելու վայրը,
13) միջնորդագիր ներկայացրած անձի իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման,
14) ֆոնդի ֆիրմային անվանման գրանցման հայտ (կորպորատիվ ֆոնդի դեպքում), որին ներկայացվող պահանջները, դրա հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանման և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից համատեղ սահմանված կարգով:»:

9)Կանոնակարգի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«21. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին սույն կանոնակարգի 18-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջնորդագիրը և կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելու պահից (միջնորդավորված ընթացակարգով դիմելու դեպքում՝ փաստաթղթերը և տեղեկությունները Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից) 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:

10)Կանոնակարգի 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-13-րդ ենթակետերով.
«10) փոստային և էլեկտրոնային հասցեները, որով ֆոնդը (կառավարիչը, իսկ եթե ոչ հրապարակային ֆոնդի գործադիր կառավարումը պատվիրակվել է կառավարիչ չհանդիսացող այլ անձի՝ այդ անձը) համաձայն կլինի ստանալ իրեն վերաբերող փաստաթղթերն ու ծանուցումները և իրականացնել նամակագրություն,
11) ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի անվանումը և գտնվելու վայրը,
12) միջնորդագիր ներկայացրած անձի իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման,
13) ֆոնդի ֆիրմային անվանման գրանցման հայտ (կորպորատիվ ֆոնդի դեպքում), որին ներկայացվող պահանջները, դրա հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանման և դրա փոփոխությունների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից համատեղ սահմանված կարգով:»:

11)Կանոնակարգի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«29. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի կանոնների գրանցման կամ գրանցումը մերժելու մասին սույն կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջնորդագիրը և կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելու պահից (միջնորդավորված ընթացակարգով դիմելու դեպքում՝ փաստաթղթերը և տեղեկությունները Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից) 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:

12)Կանոնակարգը 32-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ գլխով և 32.1-32.6-րդ կետերով՝ «ԳԼՈՒԽ 8. ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ (ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ) ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ».

«32.1 Ոչ հրապարակային ֆոնդի կանոնների (կանոնադրության) և փոփոխությունների գրանցումը կարող է իրականացվել միջնորդավորված ընթացակարգով՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 80-Ն որոշման 4-րդ կետի երրորդ ենթակետով նախատեսված ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ միջնորդ ընկերություն) առցանց գրանցման համակարգի միջոցով:

32.2 Միջնորդավորված ընթացակարգով ֆոնդի կանոնների (կանոնադրության) գրանցման համար կարող է դիմել միայն Օրենքով սահմանված ֆոնդի կառավարման լիցենզիա ստացած անձը կամ իրավաբանական անձը, որն իրականացնելու է տվյալ ֆոնդի գործադիր կառավարումը:

32.3 Ֆոնդի կանոնները (կանոնադրությունը) միջնորդավորված ընթացակարգով գրանցելու նպատակով միջնորդագիր ներկայացրած անձը միջնորդ ընկերության առցանց գրանցման համակարգի միջոցով ներկայացնում է կորպորատիվ ֆոնդի դեպքում՝ սույն կանոնակարգի 18-րդ կետով, իսկ պայմանագրային ֆոնդի դեպքում՝ 26-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

32.4 Կենտրոնական բանկը կարող է միջնորդագիր ներկայացրած անձից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 32.3-րդ կետով ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը գնահատելու համար:

32.5 Կենտրոնական բանկը միջնորդավորված ընթացակարգով ֆոնդի կանոնները (կանոնադրությունը) գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին որոշումը կայացնելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է միջնորդագիր ներկայացրած անձին՝ միջնորդ ընկերության առցանց գրանցման համակարգի միջոցով:

32.6 Միջնորդավորված ընթացակարգով գրանցված ֆոնդի կանոնների՝ սույն կանոնակարգի 23-րդ կամ 30-րդ կետով սահմանված փոփոխությունները կարող են ներկայացվել սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված եղանակներով:»:

13)Կանոնակարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Օտարերկրյա ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու ռազմավարության հակիրճ նկարագիրը,»:

14)Կանոնակարգի հավելված 1-ի աղյուսակը լրացնել 1.1-1.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

1.1.Հայերեն՝
1.2.Ռուսերեն՝
1.3.Անգլերեն՝

»:

15)Կանոնակարգի հավելված 2-ի աղյուսակը լրացնել 1.1-1.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

1.1.Հայերեն՝
1.2.Ռուսերեն՝
1.3.Անգլերեն՝

»:

16)Կանոնակարգի հավելված 6-ի աղյուսակը «Կազմակերպության հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությամբ.

«

Կազմակերպության գործադիր տնօրենի.	
անունը	
ազգանունը	
հեռախոսահամարը	
անձը հաստատող փաստաթղթի համարը	
Կազմակերպության գլխավոր հաշվապահի. (գլխավոր հաշվապահի բացակայության դեպքում լրացվում են գործադիր տնօրենի տվյալները)	
անունը	
ազգանունը	
հեռախոսահամարը	
անձը հաստատող փաստաթղթի համարը	

»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահի փոխարինող Արմեն Նուրբեկյան

08 օգոստոսի 2023 թվականի թիվ 124-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**[*]

Նպատակ ունենալով ապահովելու ֆոնդերի գրանցման միասնական ընթացակարգը և վերացնելու կարգավորման ասիմետրիան,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը և 61-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 8-ի ««Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացում կատարելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 194-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացում կատարելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»:

   2) Որոշման նախաբանից հանել «8-րդ հոդվածի 5-րդ մասը, 21-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի 4-րդ մասը,» բառերը:
   3) Որոշման 1-ին կետը և դրանով հաստատված հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. օգոստոսի 8-ին (ՀՀԳՏ, 15.08. 2023):

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 5/10) կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Կանոնակարգ 5/10-ի 19.1-րդ կետում «առցանց» բառը փոխարինել «միջնորդավորված» բառով:
   2) Կանոնակարգ 5/10-ի 84-րդ կետում «առցանց» բառը փոխարինել «միջնորդավորված» բառով:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի ««Ներդրումային ֆոնդերի միացմանը նախնական համաձայնություն տրամադրելու, միացման մասին տեղեկությունները տրամադրելու և հրապարակելու կարգը» կանոնակարգ 10/28-ը հաստատելու մասին» թիվ 19-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի միացմանը նախնական համաձայնություն տրամադրելու, միացման մասին տեղեկությունները տրամադրելու և հրապարակելու կարգը» կանոնակարգ 10/28-ի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2.Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, կամ առձեռն կամ ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ֆոնդի կառավարչի (կառավարիչների) իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ: Միջնորդավորված ընթացակարգով գրանցված ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերը կարող են սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական Բանկին ներկայացնել կարգավորվող շուկայի օպերատորի առցանց գրանցման համակարգի միջոցով:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյան

08 օգոստոսի 2023 թվականի թիվ 129-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու հաճախորդների շահերի պաշտպանությունը՝ բարձրացնելով վերջիններիս իրազեկվածության մակարդակը ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների փոփոխությունների վերաբերյալ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգը 25-րդ կետից հետո լրացնել 25.1-25.4-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«25.1 . Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է ներդրումային ծառայությունների սակագների, միջնորդավճարների և այլ ծախսերի փոփոխության և փոփոխության չափի մասին նախապես ծանուցել հաճախորդին:

25.2. Ներդրումային ծառայությունների սակագների, միջնորդավճարների և այլ ծախսերի բարձրացման դեպքում սույն կանոնակարգի 25.1.-րդ կետով նախատեսված ծանուցումը պետք է իրականացվի փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր առաջ:

25.3. Սույն կանոնակարգի 25.2.-րդ կետով նախատեսված դեպքում փոփոխված սակագները, միջնորդավճարներն ու ներդրումային ծառայությունների հետ կապված այլ ծախսերը չեն տարածվում ծանուցման օրվա դրությամբ լևերիջով գործարքների գծով բացված դիրքերի (այդ թվում՝ ավտոմատ վերակնքվող, անժամկետ գործարքների) վրա:

25.4. Սույն կանոնակարգի 25.2-րդ կետով նախատեսված ծանուցումը ուղարկվում է հաճախորդի նախընտրած եղանակով: Հաճախորդի կողմից ծանուցման նախընտրելի ձևի բացակայության դեպքում լռելյայն կարգով հաղորդակցման միջոց է ընտրվում էլեկտրոնային փոստը: Ընդ որում, պայմանագրում կատարված փոփոխությունները հրապարակային լինելու դեպքում ծանուցման մեջ հղում է կատարվում համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին): Եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացված թղթային օրինակը կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. օգոստոսի 8-ին (ՀՀԳՏ, 15.08. 2023):

2) Կանոնակարգի 26-րդ կետը «Սույն գլխի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն կանոնակարգի 25.1-25.4-րդ կետերի)» բառերով:

3) Կանոնակարգը 39-րդ կետից հետո լրացնել 39.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«39.1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է 38-րդ կետով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխությունների մասին ծանուցել՝ հաճախորդի նախընտրած եղանակով, փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր առաջ: Հաճախորդի կողմից ծանուցման նախընտրելի ձևի բացակայության դեպքում լռելյայն կարգով հաղորդակցման միջոց է ընտրվում էլեկտրոնային փոստը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյան

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՕԳՈՍՏՈՍ 2023)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 16

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 20

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 39

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 40

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 50

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը


ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 71
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 81
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 83
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 92
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2023 թ. հուլիսի իրական աճի փոփոխությունը 2022 թ. հուլիսի նկատմամբ (%)*	*2023 թ. օգոստոսի իրական աճի փոփոխությունը 2022 թ. օգոստոսի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	6.0	10.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալ	-2.4	-3.7
Շինարարության ծավալ	17.8	17.5
Առևտրի շրջանառության ծավալ	20.4	23.5
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի)	5.8	13.8
Էլեկտրաէներգիայի արտադրություն	-8.5	3.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ[2]	11.1[1]	12.5[2]



ԳՆԱՁ


Ժամանակաշրջան	2020	2021	2022	2023
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	2.2	1.6	1.4
Փետրվար	-0.2	0.6	0.1	0.1
Մարտ	0.5	1.0	1.8	-0.7
Ապրիլ	0.9	1.3	2.3	0.1
Մայիս	-0.1	-0.4	0.1	-1.8
Հունիս	-1.4	-0.8	0.3	-1.4
Հուլիս	-2.1	-0.5	-1.4	-1.0
Օգոստոս	-0.1	0.4	0.2	0.1
Սեպտեմբեր	-0.2	-0.1	0.6	
Հոկտեմբեր	0.5	0.7	0.3	
Նոյեմբեր	1.3	1.7	1.1	
Դեկտեմբեր	3.4	1.6	1.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.3	4.5	7.1	8.1
Փետրվար	-0.5	5.3	6.5	8.1
Մարտ	-0.1	5.8	7.4	5.4
Ապրիլ	0.9	6.2	8.4	3.2
Մայիս	1.2	5.9	9.0	1.3
Հունիս	1.7	6.5	10.3	-0.5
Հուլիս	1.5	8.2	9.3	-0.1
Օգոստոս	1.8	8.8	9.1	-0.2
Սեպտեմբեր	1.4	8.9	9.9	
Հոկտեմբեր	1.3	9.1	9.5	
Նոյեմբեր	1.6	9.6	8.8	
Դեկտեմբեր	3.7	7.7	8.3	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[4]

Անվանում	2023 թ. օգոստոսը 2022 թ. օգոստոսի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**-0.2**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-4.0	-1.67
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.6	0.39
Հագուստ և կոշիկ	5.2	0.18
Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.4	0.22
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	4.4	0.18
Առողջապահություն	2.1	0.18
Տրանսպորտ	0.7	0.05
Կապ	-0.5	-0.02
Հանգիստ և մշակույթ	1.5	0.01
Կրթություն	4.7	0.12
Ռեստորաններ և հյուրանոցներ	5.4	0.10
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.5	0.18

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [4,5]

Ժամանակաշրջան	2020	2021	2022	2023
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.0	0.7	0.3	0.2
Փետրվար	0.1	0.8	0.6	0.1
Մարտ	0.0	0.8	1.1	-0.1
Ապրիլ	0.5	0.6	1.3	0.0
Մայիս	0.0	0.4	0.7	-0.1
Հունիս	-0.1	0.3	1.0	-0.2
Հուլիս	-0.1	0.3	0.7	0.0
Օգոստոս	0.1	0.3	0.4	0.2
Սեպտեմբեր	0.3	0.3	0.7	
Հոկտեմբեր	0.3	0.4	0.3	
Նոյեմբեր	0.3	0.6	0.3	
Դեկտեմբեր	0.9	0.5	0.4	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.4	3.0	5.8	7.9
Փետրվար	0.4	3.7	5.6	7.3
Մարտ	0.3	4.6	5.9	6.0
Ապրիլ	0.8	4.6	6.6	4.6
Մայիս	0.8	5.1	7.0	3.8
Հունիս	0.7	5.5	7.8	2.5
Հուլիս	0.8	5.9	8.3	1.7
Օգոստոս	0.8	6.1	8.3	1.5
Սեպտեմբեր	0.9	6.1	8.7	
Հոկտեմբեր	1.2	6.2	8.6	
Նոյեմբեր	1.4	6.6	8.2	
Դեկտեմբեր	2.2	6.2	8.1	



ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [4,5]

Անվանում	2023 թ. օգոստոսը 2022 թ. օգոստոսի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**1.5**	
Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ (Ծ)	24.8	0.28
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար (Ծ)	13.9	0.16
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության (Կ)	14.2	0.15
Բանկերի, փոստային բաժանմունքների կողմից իրականացվող այլ ծառայություններ (Ծ)	50.2	0.12
Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսման վարձը (Ծ)	4.6	0.10
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած (Կ)	2.4	0.09
Ակնաբույժի ծառայություններ (Ծ)	13.4	0.08
Դիզելային վառելիք (Կ)	-23.2	-0.08
Սրտանոթային դեղամիջոցներ (Կ)	-6.9	-0.08
Բուսական այլ յուղ կամ ճարպ «Ռեդի» (Կ)	-31.4	-0.09
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած (Կ)	-12.0	-0.11
Ալյուր ցորենի՝ բարձր տեսակի (Կ)	-18.3	-0.19
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար (Կ)	-5.7	-0.22
Հաց ցորենի՝ բարձր տեսակի (Կ)	-7.6	-0.33
Բուսական յուղ՝ արևածաղկի (Կ)	-36.8	-0.49

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի x-13Arima -seats մեթոդով կատարված հաշվարկների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[5] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2023 թ. հունվար - հուլիս (մլն ԱՄՆ դոլար)	2023 թ. հունվար - հուլիսը 2022 թ. հունվար - հուլիսի նկատմամբ (%)	2023 թ. հունվար - օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)	2023 թ. հունվար - օգոստոսը 2022 թ. հունվար - օգոստոսի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕԲ)	3843.6	162.1	4458. 9	151. 8
Ներմուծում (ՍԻՖ)	6534.0	163.0	7536. 8	153. 8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2690.4	164.2	3077. 9	156. 8

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2022 թվական					
	օգոստոս			հունվար – օգոստոս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	327406	30658	296749	1901529	256468	1645062
ԱՄՆ	58334	25041	33293	433776	174035	259741
Ուկրաինա	32	1879	-1848	3721	15861	-12140
Ղազախստան	3880	558	3322	34898	4564	30333
Գերմանիա	5991	12750	-6758	48846	66012	-17166
Իսպանիա	1278	5147	-3870	10856	28358	-17502
Ֆրանսիա	4723	3295	1428	39178	26951	12227
ԱՄԷ	4139	17899	-13760	22194	140021	-117827
Չինաստան	903	7467	-6564	2437	53639	-51202
Թուրքիա	134	556	-422	1076	6413	-5337
Այլ երկրներ	65464	75840	-10376	411513	717187	-305675
Ընդամենը	472283	181090	291192	2910023	1489510	1420513

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2023 թվական					
	օգոստոս			հունվար – օգոստոս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	342943	64134	278809	2698288	460281	2238008
ԱՄՆ	63487	35057	28430	430651	288072	142579
Ուկրաինա	15	1186	-1170	407	11099	-10693
Ղազախստան	3684	913	2771	28148	9232	18915
Գերմանիա	16958	8908	8050	71843	86596	-14753
Իսպանիա	2215	7714	-5500	14403	85503	-71101
Ֆրանսիա	4452	9721	-5270	35217	56061	-20844
ԱՄԷ	4820	37743	-32923	51813	320228	-268414
Չինաստան	482	9402	-8920	3557	58520	-54963
Թուրքիա	308	1076	-768	2590	11219	-8629
Այլ երկրներ	78120	139250	-61130	482955	1199648	-716693
Ընդամենը	517483	315104	202380	3819872	2586460	1233412


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2022 թվական					
	օգոստոս			հունվար – օգոստոս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	132873	12444	120430	825261	117388	707873
ԱՄՆ	23666	10161	13505	195874	78702	117172
Ուկրաինա	13	762	-750	1778	7042	-5264
Ղազախստան	1574	226	1348	15814	2073	13741
Գերմանիա	2432	5173	-2741	22052	28730	-6678
Իսպանիա	519	2088	-1570	4913	12529	-7616
Ֆրանսիա	1916	1338	578	17940	11984	5955
ԱՄԷ	1681	7264	-5584	9952	61575	-51623
Չինաստան	366	3029	-2663	1068	23972	-22903
Թուրքիա	54	225	-171	486	2907	-2421
Այլ երկրներ	26574	30772	-4198	184600	309588	-124987
Ընդամենը	191668	73485	118183	1279738	656490	623249

մլն ՀՀ դրամ

Երկիր	2023 թվական					
	օգոստոս			հունվար – օգոստոս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	132429	24764	107665	1050707	178575	872131
ԱՄՆ	24514	13538	10976	167273	111923	55351
Ուկրաինա	6	458	-452	158	4316	-4158
Ղազախստան	1422	352	1070	10933	3587	7346
Գերմանիա	6537	3440	3097	27865	33676	-5812
Իսպանիա	856	2979	-2124	5593	33213	-27619
Ֆրանսիա	1719	3755	-2036	13688	21769	-8081
ԱՄԷ	1861	14579	-12718	20086	124604	-104518
Չինաստան	186	3631	-3444	1381	22716	-21335
Թուրքիա	119	415	-296	1008	4358	-3350
Այլ երկրներ	30167	53779	-23612	187650	467338	-279688
Ընդամենը	199817	121690	78126	1486342	1006074	480268





ԴԵՊԻ ՀՀ ԱՆՁՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2022					2023	
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.
Դրամական փոխանցումներ	**271.6**	**612.4**	**613.8**	**533.3**	**2031.2**	**339.8**	**407.3**
Աշխատողների զուտ աշխատավարձ[1]	67.4	122.8	122.2	105.2	**417.7**	67.3	80.9
Աշխատողների աշխատավարձ[2]	86.8	158.2	157.4	135.5	**537.9**	86.7	104.2
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ[3]	13.4	24.5	24.4	21.0	**83.3**	13.4	16.1
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված համախառն եկամուտներ	17.3	31.6	31.4	27.0	**107.3**	17.3	20.8
Անձնական տրանսֆերտներ	183.7	451.0	451.8	392.5	**1479.0**	254.3	305.0
Կապիտալ տրանսֆերտներ	7.1	14.1	15.4	14.5	**51.1**	4.7	5.3

[1] Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է՝ առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:

[2] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:

[3] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2022	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	171.2	170.3	178.9	176.6	175.1	182.2	187.6	192.5	193.3	198.9	202.6	206.8
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	210.4	211.4	225.6	220.8	220.2	231.1	242.2	248.9	250.2	258.8	261.5	264.8
2023	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	228.2	234.9	240.1	241.7	237.2	237.9	239.7	244.2				
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	293.2	303.4	312.5	317.5	318.2	325.5	333.4	341.5				

[1] 2023 թվականին իրականացվել են արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեթոդաբանական փոփոխություններ: Մասնավորապես՝ 5 տարվա ամրագրված միջինները փոխարինվել են 3 տարվա սահող միջիններով: 2023 թվականի համար արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեջ օգտագործվել են 2020–2022 թթ. արտաքին առևտրաշրջանառության տվյալների հիման վրա հաշվարկված միջին կշիռները:

[2] Հաշվարկի մեջ ընդգրկվել են ՀՀ ամբողջ արտաքին առևտրաշրջանառության առնվազն 85% ծածկույթ ապահովող երկրների տվյալները: Հաշվարկներում ներառված չէ ոչ առևտրային բնույթի և պատվիրատուի հումքով կատարվող առևտրաշրջանառությունը, ինչպես նաև ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալները՝ պայմանավորված ըստ երկրների տվյալների բացակայությամբ:

[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ՀՀ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[4] Ինդեքսի աճը նշանակում է արժևորում:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ՍՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՍՏ «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ» 6-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)[1,2,3]

մլն ԱՄՆ դոլար

	2022					2023	
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-182.9**	**23.4**	**362.0**	**-51.5**	**151.0**	**-351.5**	**-298.1**
կրեդիտ	**1766.6**	**2743.0**	**4020.8**	**4034.5**	**12564.9**	**3304.2**	**3575.7**
դեբետ	**1949.5**	**2719.6**	**3658.8**	**4085.9**	**12413.9**	**3655.7**	**3873.8**
ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-203.5**	**-91.8**	**153.3**	**-6.1**	**-148.2**	**-211.9**	**-266.9**
կրեդիտ	1374.1	2051.9	3237.1	3375.1	10038.2	2834.4	3019.6
դեբետ	1577.7	2143.7	3083.8	3381.2	10186.4	3046.3	3286.5
Ապրանքներ	-393.2	-406.3	-435.6	-624.1	-1859.2	-666.6	-778.3
կրեդիտ	815.3	1223.1	1744.9	1934.6	5717.9	1623.0	1698.2
դեբետ	1208.6	1629.4	2180.5	2558.7	7577.1	2289.6	2476.5
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-415.0	-442.1	-481.4	-700.3	-2038.9	-697.6	-782.0
կրեդիտ	781.7	1161.2	1619.3	1741.4	5303.7	1426.6	1613.8
դեբետ	1196.7	1603.3	2100.8	2441.7	7342.5	2124.1	2395.9
Որից վերաարտահանում (կրեդիտ)	5.5	5.6	6.8	8.7	26.7	7.2	16.0
Ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանում (կրեդիտ)	-	-	-	-	-	-	-
Ոչ մոնետար ոսկի	21.7	35.9	45.8	76.2	179.6	30.9	3.7
կրեդիտ	33.6	61.9	125.5	193.2	414.2	196.4	84.3
դեբետ	11.9	26.0	79.7	117.0	234.6	165.5	80.7
Ծառայություններ	**189.7**	**314.4**	**588.9**	**618.0**	**1711.0**	**454.7**	**511.4**
կրեդիտ	**558.8**	**828.8**	**1492.2**	**1440.5**	**4320.3**	**1211.4**	**1321.4**
դեբետ	**369.1**	**514.3**	**903.4**	**822.5**	**2609.3**	**756.7**	**810.0**
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	10.0	18.0	39.8	43.0	111.0	28.4	28.7
կրեդիտ	10.0	18.0	39.8	43.0	111.0	28.4	28.7
դեբետ	-	-	-	-	-	-	-
Ապրանքներ վերամշակման համար հաշվետու երկրում՝ Ապրանքներ վերադարձված (կր), Ապրանքներ ստացված (դբ)	10.0	18.0	39.8	43.0	111.0	28.4	28.7
կրեդիտ	50.3	114.8	122.6	155.3	443.0	131.0	155.3
դեբետ	40.3	96.8	82.8	112.3	332.1	102.6	126.6
Ապրանքներ վերամշակման համար արտերկրում՝ Ապրանքներ ուղարկված (կր), Ապրանքներ վերադարձված (դբ)	-	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-	-
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-5.5	-6.3	-7.6	-7.0	-26.5	-7.0	-8.2
կրեդիտ	0.8	1.1	1.2	1.4	4.5	1.1	1.4
դեբետ	6.3	7.4	8.9	8.3	30.9	8.1	9.6
Տրանսպորտ	-47.9	-51.4	-52.4	-61.5	-213.2	-52.9	-65.9
կրեդիտ	79.3	121.3	177.9	206.7	585.2	188.1	195.3
դեբետ	127.2	172.7	230.3	268.2	798.4	241.0	261.2
որից՝ մարդատար	2.0	-6.7	-2.0	0.1	-6.6	5.7	6.6
կրեդիտ	10.1	14.2	24.6	25.4	74.2	26.0	31.1
դեբետ	8.0	20.9	26.6	25.2	80.8	20.3	24.5
բեռնատար	-47.4	-44.0	-50.1	-54.6	-196.1	-56.9	-66.2
կրեդիտ	64.7	101.2	144.1	173.9	483.9	150.7	157.5
դեբետ	112.1	145.3	194.2	228.4	680.0	207.6	223.8
այլ	-2.5	-0.6	-0.3	-7.1	-10.5	-1.8	-6.3
կրեդիտ	4.6	5.9	9.2	7.5	27.1	11.3	6.6
դեբետ	7.1	6.5	9.5	14.5	37.6	13.1	12.9

1	2	3	4	5	6	7	8
Ծովային տրանսպորտ	-19.2	-26.6	-35.8	-41.9	-123.5	-38.0	-41.4
կրեդիտ	-	-	-	-	-	-	-
դեբետ	19.2	26.6	35.8	41.9	123.5	38.0	41.4
Օդային տրանսպորտ	1.0	-2.9	5.6	13.7	17.3	22.7	21.2
կրեդիտ	15.5	23.2	40.8	51.8	131.3	57.3	60.9
դեբետ	14.5	26.1	35.2	38.1	114.0	34.6	39.7
Տրանսպորտի այլ տեսակներ	-29.3	-21.5	-22.2	-33.3	-106.2	-38.5	-45.3
կրեդիտ	63.8	98.0	136.8	154.3	452.9	129.5	134.3
դեբետ	93.1	119.5	158.9	187.6	559.2	168.0	179.6
Փոստային և սուրհանդակային ծառայություններ	-0.4	-0.4	-0.0	0.1	-0.8	0.8	-0.4
կրեդիտ	0.0	0.1	0.3	0.5	1.0	1.3	0.1
դեբետ	0.4	0.5	0.4	0.5	1.7	0.4	0.5
Ճանապարհորդություն	135.8	214.2	399.9	392.7	1142.5	279.7	328.6
կրեդիտ	281.2	437.1	935.3	785.5	2439.1	659.9	723.6
դեբետ	145.4	222.9	535.4	392.8	1296.6	380.2	394.9
Գործնական	-9.9	-13.2	-9.5	11.2	-21.5	-25.3	-11.0
կրեդիտ	18.0	28.0	62.7	50.0	158.7	30.8	41.4
դեբետ	27.9	41.3	72.2	38.8	180.2	56.1	52.4
Անձնական	145.7	227.4	409.4	381.4	1164.0	305.0	339.6
կրեդիտ	263.2	409.1	872.6	735.5	2280.4	629.1	682.2
դեբետ	117.5	181.7	463.2	354.0	1116.4	324.1	342.6
Շինարարություն	11.2	25.2	20.3	11.5	68.2	12.0	10.9
կրեդիտ	19.8	29.7	29.4	25.3	104.2	15.8	19.0
դեբետ	8.7	4.5	9.1	13.8	36.0	3.8	8.1
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	-10.0	-13.1	-14.0	-18.7	-55.9	-18.9	-20.5
կրեդիտ	9.6	13.2	18.3	20.0	61.1	17.2	18.7
դեբետ	19.6	26.4	32.3	38.7	117.0	36.1	39.3
Ֆինանսական ծառայություններ	10.8	28.4	41.4	52.6	133.3	10.6	21.4
կրեդիտ	17.8	47.3	58.2	74.9	198.3	26.7	38.5
դեբետ	7.0	18.9	16.8	22.3	65.0	16.1	17.1
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	110.8	127.2	183.5	237.7	659.3	231.7	253.9
կրեդիտ	120.1	137.9	198.0	255.3	711.4	250.1	273.9
դեբետ	9.3	10.7	14.5	17.6	52.0	18.3	20.0
Այլ գործնական ծառայություններ	-21.9	-25.4	-14.6	-29.6	-91.6	-27.2	-33.8
կրեդիտ	7.6	11.2	21.0	16.3	56.0	12.3	11.1
դեբետ	29.5	36.6	35.6	45.9	147.6	39.4	44.8
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	-3.3	-4.5	-4.4	-5.2	-17.4	-4.6	-5.7
կրեդիտ	2.9	2.0	3.4	3.2	11.4	3.1	2.1
դեբետ	6.2	6.5	7.8	8.3	28.8	7.7	7.7
Պետական ապրանքներ և ծառայություններ	-0.4	2.3	-3.0	2.4	1.3	2.8	1.9
կրեդիտ	9.6	10.0	9.7	9.0	38.2	8.7	9.2
դեբետ	9.9	7.7	12.8	6.6	36.9	5.9	7.3
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**-146.5**	**-290.8**	**-126.1**	**-285.2**	**-848.6**	**-258.3**	**-174.9**
կրեդիտ	**103.6**	**181.3**	**184.8**	**179.2**	**648.8**	**135.3**	**158.8**
դեբետ	**250.1**	**472.1**	**310.9**	**464.4**	**1497.5**	**393.6**	**333.6**
Աշխատողների վարձատրություն	68.4	115.9	83.9	51.2	319.4	58.2	71.7
կրեդիտ	91.3	162.7	161.9	140.0	555.8	91.2	108.7
դեբետ	22.9	46.7	77.9	88.8	236.3	33.0	37.0
Ներդրումային եկամուտներ	-214.9	-406.8	-210.1	-336.4	-1168.1	-316.5	-246.5
կրեդիտ	12.3	18.6	23.0	39.2	93.1	44.1	50.1
դեբետ	227.2	425.4	233.0	375.6	1261.1	360.6	296.6

1	2	3	4	5	6	7	8
Ուղղակի ներդրումներից	-137.0	-321.3	-122.9	-245.8	-827.0	-227.6	-160.3
կրեդիտ	1.2	1.8	2.1	1.9	7.0	1.8	2.1
դեբետ	138.2	323.1	124.9	247.7	834.0	229.4	162.4
Եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	-112.2	-295.4	-95.3	-211.4	-714.3	-198.8	-131.2
կրեդիտ	0.0	0.2	0.6	0.6	1.4	0.4	0.4
դեբետ	112.2	295.6	96.0	212.0	715.7	199.3	131.6
Շահաբաժիններ և գանձումներ քվազի-կորպորացիաների եկամուտներից	-34.2	-68.3	-2.4	-24.0	-128.9	-52.4	-65.6
կրեդիտ	0.0	0.2	0.6	0.6	1.4	0.4	0.4
դեբետ	34.2	68.5	3.0	24.6	130.3	52.8	66.0
Վերաներդրված եկամուտ	-77.9	-227.1	-92.9	-187.4	-585.4	-146.5	-65.6
կրեդիտ	-	-	-	-	-	-	-
դեբետ	77.9	227.1	92.9	187.4	585.4	146.5	65.6
Տոկոսավճարներ	-24.9	-25.9	-27.5	-34.4	-112.7	-28.8	-29.2
կրեդիտ	1.2	1.6	1.5	1.3	5.6	1.3	1.7
դեբետ	26.1	27.5	29.0	35.7	118.3	30.1	30.9
Պորտֆելային ներդրումներից	-21.7	-27.3	-24.4	-16.0	-89.4	-16.1	-15.4
կրեդիտ	3.4	4.5	3.7	9.6	21.2	10.6	13.4
դեբետ	25.1	31.7	28.1	25.6	110.6	26.7	28.8
Ներդրումային եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	0.5	-1.5	0.0	1.0	-0.0	-2.8	-1.3
կրեդիտ	0.5	1.4	0.0	1.0	2.9	0.6	1.4
դեբետ	-	2.9	-	-	2.9	3.4	2.7
Տոկոսավճարներ	-22.2	-25.7	-24.4	-16.9	-89.3	-13.4	-14.1
կրեդիտ	2.9	3.0	3.7	8.7	18.3	10.0	12.0
դեբետ	25.1	28.8	28.1	25.6	107.6	23.4	26.1
Այլ ներդրումներից	-56.1	-58.2	-62.8	-74.5	-251.7	-72.8	-70.8
կրեդիտ	7.7	12.3	17.1	27.7	64.8	31.7	34.6
դեբետ	63.9	70.5	80.0	102.2	316.6	104.5	105.4
Գանձումներ քվազի-կորպորացիոն եկամուտներից	-	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-	-
Տոկոսավճարներ	-55.9	-57.9	-62.5	-74.0	-250.3	-72.5	-70.4
կրեդիտ	7.7	12.3	17.1	27.7	64.8	31.7	34.6
դեբետ	63.7	70.2	79.6	101.7	315.2	104.2	105.0
Պահուստային ակտիվներից	-	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-	-
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**167.1**	**406.1**	**334.8**	**239.8**	**1147.8**	**118.7**	**143.7**
կրեդիտ	**288.9**	**509.9**	**598.9**	**480.2**	**1877.9**	**334.6**	**397.4**
դեբետ	**121.8**	**103.8**	**264.1**	**240.4**	**730.0**	**215.8**	**253.7**
Պետական կառավարում	19.4	15.8	-40.3	-66.0	-71.0	-59.3	-70.6
կրեդիտ	51.0	23.4	99.9	60.0	234.2	56.6	69.3
դեբետ	31.5	7.5	140.2	126.0	305.3	115.9	139.9
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUNԱԿ	147.7	390.2	375.1	305.9	1218.9	178.0	214.3
կրեդիտ	237.9	486.5	498.9	420.2	1643.6	277.9	328.1
դեբետ	90.2	96.3	123.9	114.4	424.8	99.9	113.8
Անձնական տրանսֆերտներ (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև)	102.2	370.2	345.9	291.7	1109.9	163.7	203.4
կրեդիտ	183.7	451.0	451.8	392.6	1479.0	254.5	305.0
դեբետ	81.5	80.8	105.9	100.9	369.1	90.8	101.6
Այլ ընթացիկ տրանսֆերտներ	45.5	20.1	29.2	14.2	108.9	14.3	10.9
կրեդիտ	54.2	35.6	47.1	27.7	164.6	23.4	23.1
դեբետ	8.7	15.5	17.9	13.5	55.7	9.1	12.2

1	2	3	4	5	6	7	8
2. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	**8.5**	**21.2**	**19.9**	**26.9**	**76.5**	**8.7**	**9.9**
կրեդիտ	**10.1**	**22.9**	**21.6**	**28.3**	**82.9**	**9.5**	**12.5**
դեբետ	**1.6**	**1.7**	**1.8**	**1.4**	**6.4**	**0.8**	**2.6**
Կապիտալ տրանսֆերտներ	8.5	21.2	19.9	26.9	76.5	8.7	9.9
կրեդիտ	10.1	22.9	21.6	28.3	82.9	9.5	12.5
դեբետ	1.6	1.7	1.8	1.4	6.4	0.8	2.6
Պետական կառավարում	2.6	6.4	4.1	11.6	24.7	3.2	5.0
կրեդիտ	2.6	6.4	4.1	11.6	24.7	3.2	5.0
դեբետ	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՄՈԱԿ	5.9	14.8	15.8	15.3	51.8	5.5	4.9
կրեդիտ	7.5	16.5	17.5	16.7	58.2	6.3	7.5
դեբետ	1.6	1.7	1.8	1.4	6.4	0.8	2.6
Զուտ վարկավորում (+), զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	**-174.5**	**44.6**	**381.9**	**-24.5**	**227.4**	**-342.8**	**-288.2**
3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	**-234.4**	**277.2**	**388.0**	**-182.6**	**248.3**	**-6.6**	**-17.4**
Զուտ վարկավորում (+), զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	**-234.4**	**277.2**	**388.0**	**-182.6**	**248.3**	**-6.6**	**-17.4**
Ուղղակի ներդրումներ	**-351.0**	**-203.7**	**-143.7**	**-249.9**	**-948.3**	**-132.0**	**-94.0**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	5.3	37.8	-0.2	6.9	49.7	9.1	16.9
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	4.4	32.0	12.2	-1.9	46.7	7.1	8.2
Բաժնետիրական կապիտալ՝ առանց վերաներդրված եկամտի	4.4	32.0	12.2	-1.9	46.7	7.1	8.2
Վերաներդրված եկամուտ	-	-	-	-	-	-	-
Պարտքի գործիքներ	0.9	5.8	-12.4	8.7	3.0	2.0	8.7
Զուտ պարտավորությունների ստանձնում	356.3	241.4	143.5	256.8	998.1	141.1	110.9
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	364.4	256.5	106.6	184.7	912.1	147.4	-190.9
Բաժնետիրական կապիտալ՝ առանց վերաներդրված եկամտի	286.5	29.4	13.6	-2.7	326.8	0.9	-256.5
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	286.5	29.4	13.6	-2.7	326.8	0.9	-256.5
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	-	-	-	-
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	-	-	-	-	-	-	-
Վերաներդրված եկամուտ	77.9	227.1	92.9	187.4	585.3	146.5	65.6
Պարտքի գործիքներ	-8.1	-15.0	36.9	72.1	86.0	-6.3	301.7
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	11.8	40.6	25.9	15.3	93.7	12.6	28.7
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	-	-	-	-
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	-19.9	-55.6	11.0	56.8	-7.7	-18.8	273.1
Պորտֆելային ներդրումներ	**79.2**	**146.6**	**247.0**	**883.1**	**1355.9**	**-30.8**	**-158.1**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	**47.7**	**85.4**	**91.1**	**807.3**	**1031.5**	**-76.0**	**-52.3**
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	20.4	31.4	37.6	39.1	128.5	53.2	68.9
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի Կենտրոնական բանկից	-0.0	-2.5	-0.7	1.1	-2.1	0.9	-0.2
Պետական կառավարում	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	20.4	33.9	38.3	38.0	130.6	52.3	69.1
